# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

**ք. Վայք**

**25/12/2021**

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
## ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 10 անդամներ:

Բացակա էին՝ Թարո Ավետյանը, Սոնա Կարապետյանը, Կառլեն Մինասյանը, Եվա Մովսիսյանը, Համբարձում Ջանոյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Մ. Մաթոսյանը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գ. Մուշկամբարյանը**

Լսեցին
***ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 7 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ/***

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

1. Հաստատել Վայք համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 7 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.
   1.1 Վայք համայնքի ավագանու 2018թ. հուլիսի 18-ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> թիվ 3 որոշումն ուժը կորցրած ճանաչելու, և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու մասին
   1.2 Վայք համայնքի ավագանու ֆինանսավարկային և համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի թեկնածությունը հաստատելու մասին
   1.3 Վայք համայնքի ավագանու մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի թեկնածությունը հաստատելու մասին

1.4 Վայք համայնքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի թեկնածությունը հաստատելու մասին
1.5 Վայք համայնքի ավագանու ֆինանսավարկային և համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի թեկնածությունը հաստատելու մասին
1.6 Վայք համայնքի ավագանու մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի թեկնածությունը հաստատելու մասին
1.7 Վայք համայնքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի թեկնածությունը հաստատելու մասին
1.8 Համայնքի բյուջեում և բյուջեի նախահաշիվներում փոփոխություններ կատարելու մասին
1.9 Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու մշտական հանձնաժողովների անհատական կազմը հաստատելու մասին
1.10 Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու առաջին նստաշրջանի արտահերթ նիստի գումարման օրը սահմանելու մասին.:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 61/

Լսեցին
***ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018թ. ՀՈՒԼԻՍԻ 18-ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 3 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ/***

Հիմք ընդունելով Վայք համայնքի ավագանու կանոնակարգի 49-րդ կետը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

1. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2018թ. հուլիի 18-ի <<Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու և դրանց կազմը հաստատելու մասին>> թիվ 3 որոշումը:
2. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու երեք մշտական հանձնաժողովներ
   - Ֆինանսավարկային և համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման հարցերի մշտական հանձնաժողով
   - Մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով
   - Քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 62/

Լսեցին

***ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի N 55 որոշմամբ հաստատված կանոնակարգի 51-րդ և 52-րդ կետերով և հիմք ընդունելով Վայք համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության առաջարկությունը՝

1. Հաստատել Վայք համայնքի ավագանու ֆինանսավարկային և համայնքի սոցիալ-տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի՝ «ԱԶԱՏԱԿԱՆ » խմբակցության անդամ Անուշ Արամյանի թեկնածությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 63/

Լսեցին

***ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՍՊՈՐՏԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի N 55 որոշմամբ հաստատված կանոնակարգի 51-րդ և 52-րդ կետերով և հիմք ընդունելով Վայք համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության առաջարկությունը՝

1. Հաստատել Վայք համայնքի ավագանու մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Լևոն Բադալյանի թեկնածությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 64/

Լսեցին

***ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ/*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի N 55 որոշմամբ հաստատված կանոնակարգի 51-րդ և 52-րդ կետերով և հիմք ընդունելով Վայք համայնքի ավագանու «ԱԶԱՏԱԿԱՆ» խմբակցության առաջարկությունը՝

1. Հաստատել Վայք համայնքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի՝ «ԱԶԱՏԱԿԱՆ» խմբակցության նախագահ Սիմոն Բաբայանի թեկնածությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 65/

Լսեցին

***ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ/*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի N 55 որոշմամբ հաստատված կանոնակարգի 51-րդ և 52-րդ կետերով և հիմք ընդունելով Վայք համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության առաջարկությունը՝

1. Հաստատել Վայք համայնքի ավագանու ֆինանսավարկային և համայնքի սոցիալ-տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Շուշանիկ Ասլանյանի թեկնածությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 66/

Լսեցին

***ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՍՊՈՐՏԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ/*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի N 55 որոշմամբ հաստատված կանոնակարգի 51-րդ և 52-րդ կետերով և հիմք ընդունելով Վայք համայնքի ավագանու «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» խմբակցության առաջարկությունը՝

1. Հաստատել Վայք համայնքի ավագանու մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի՝ «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» խմբակցության անդամ Աստղիկ Հակոբյանի թեկնածությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 67/

Լսեցին
***ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի N 55 որոշմամբ հաստատված կանոնակարգի 51-րդ և 52-րդ կետերով և հիմք ընդունելով Վայք համայնքի ավագանու «ԱԶԱՏԱԿԱՆ» խմբակցության առաջարկությունը՝

1. Հաստատել Վայք համայնքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի՝ «ԱԶԱՏԱԿԱՆ» խմբակցության անդամ Արտավազդ Խաչատրյանի թեկնածությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 68/

Լսեցին
***ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵՎ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/***

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <Բյուջետային համակարգի մասին> ՀՀ օրենքի 33 հոդվածի 4-րդ կետով

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի կողմից առաջարկվող հետևյալ փոփոխություններին.

1. Վայք համայնքի վարչական բյուջեի եկամտային մասում կատարել փոփոխություն. գույքահարկ փոխադրամիջոցների համար /1121 տող/ 44157100 /քառասունչորս միլիոն հարյուր հիսունյոթ հազար հարյուր/ դրամ գումարից նվազեցնել 1000000 /մեկ միլիոն/ դրամ և ավելացնել անշարժ գույքի հարկ իրավաբանական անձանցից 1113 տողին:

2. Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար /տող 1111 / 4000000 /չորս միլիոն/ դրամ գումարից նվազեցնել 2000000 /երկու միլիոն/ դրամ և ավելացնել ավելացնել անշարժ գույքի հարկ ֆիզիկական անձանցից 1113 տողին:

3. Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ /սուբվենցիաներ /տող 1255/ 3734000 /երեք միլիոն յոթ հարյուր երեսունչորս հազար/ գումարին ավելացնել 402400 /չորս հարյուր երկու հազար չորս հարյուր/ դրամ:

4. Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմինների պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար 1342 տողի 5474300 /հինգ միլիոն չորս հարյուր յոթանասունչորս հազար երեք հարյուր/ գումարը նվազեցնել 579200 /հինգ հարյուր յոթանասունինը հազար երկու հարյուր/ դրամով:

5. Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ /սուբվենցիաներ/ 1261 տողին ավելացնել 9634200 /ինը միլիոն վեց հարյուր երեսունչորս հազար երկու հարյուր/ դրամ՝ Արին և Ազատեկ բնակավայրերի փողոցների լուսավորության համար:

6. Վայք համայնքի բյուջեի ծախսային մասի գործառնական դասակարգման բաժին 11, խումբ 01, դաս 02 /վարչական մասի պահուստային ֆոնդ/ 4891 տնտեսագիտական դասակարգումից նվազեցնել 8000000 /ութ միլիոն/ դրամ և տեղափոխել՝

- Վայք համայնքի բյուջեի ծախսային մասի գործառնական դասակարգման բաժին 9, խումբ 1, դաս 1 /Նախադպրոցական կրթություն/ 4637 տնտեսագիտական դասակարգմանը՝ 3600000 /երեք միլիոն վեց հարյուր հազար/ դրամ,
- Վայք համայնքի բյուջեի ծախսային մասի գործառնական դասակարգման բաժին 9, խումբ 5, դաս 1 /Արտադպրոցական դաստիարակություն/ 4637 տնտեսագիտական դասակարգման 250000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ,
- Վայք համայնքի բյուջեի ծախսային մասի գործառնական դասակարգման բաժին 8, խումբ 2, դաս 4 /Այլ մշակութային կազմակերպություններ/ 4637 տնտեսագիտական դասակարգմանը 700000 /յոթ հարյուր հազար/ դրամ,
- Վայք համայնքի բյուջեի ծախսային մասի գործառնական դասակարգման բաժին 5, խումբ 1, դաս 1 /Շրջակա միջավայրի պաշտպանություն՝ աղբահանություն/ 4637 տնտեսագիտական դասակարգմանը 3000000 /երեք միլիոն/ դրամ,
- Վայք համայնքի բյուջեի ծախսային մասի գործառնական դասակարգման բաժին 1, խումբ 1, դաս 1 /Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում/ 4637 տնտեսագիտական դասակարգմանը 450000 /չորս հարյուր հիսուն հազար/ դրամ:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 69/

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2022 թվականի հունվարի 13-ին, ժամը՝ 18:00–ին
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 70/

Ավագանու անդամներ

ՇՈՒՇԱՆԻԿ ԱՍԼԱՆՅԱՆ

ՀԱՅԿ ԱՎԱԳՅԱՆ

ԱՆՈՒՇ ԱՐԱՄՅԱՆ

ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ

ԼԵՎՈՆ ԲԱԴԱԼՅԱՆ

ԱՐՏԱՎԱԶԴ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀՐԱՉԻԿ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ*

Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ________________

*Նիստն արձանագրեց՝* Գ. Մուշկամբարյանը________________